

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԵԿ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ  
ԽՈՒՍՔՓԵԼԸ ԿՎԱԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը եւ Չեխիայի Հանրապետությունը,

ցանկանալով կնքել եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելու կանխելու մասին համաձայնագիր,

համաձայնեցին հետեւյալի մասին.

**Հոդված 1**

**ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

**Հոդված 2**

**ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ**

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների կողմից եկամտի եւ գույքի նկատմամբ կիրառվող հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամտահարկ եւ գույքահարկ են համարվում եկամտի ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր արժեքից կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերից, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամտությունը, ծեռնարկությունների վճարած աշխատավարձի կամ ռոճիկի ընդհանուր գումարից գանձվող, ինչպես նաև գույքի արժեքածի վրա տարածվող հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է գործող՝ մասնավորապես հետեւյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանում՝

ի) շահութահարկ.

ii) եկամտահարկ.

iii) գույքահարկ.

բ) Չեխիայի Հանրապետությունում՝

i) ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկ.

ii) իրավաբանական անձանցից գանձվող եկամտահարկ.

iii) անշարժ գույքից գանձվող հարկ.

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաեւ բոլոր՝ նույնատիպ կամ եապես համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն։ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց ծանուցում են իրենց հարկային օրենքներում կատարված ցանկացած եական փոփոխության մասին։

**Հոդված 3**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՐՄԱՆՈՒՄՆԵՐ**

1. Սույն Համաձայնագրի նպատակներով, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում.

ա) "Պայմանավորվող պետություն" եւ "մյուս Պայմանավորվող պետություն"

տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Չեխիայի Հանրապետություն կամ Հայաստան։

բ) "Հայաստան" տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն, իսկ երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ տարածք, ներառյալ ցամաքը, ջրերը, ընդերքը եւ օդային տարածքը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները եւ իրավասությունը՝ ներպետական օրենսդրության եւ միջազգային իրավունքի համաձայն։

գ) "Չեխիայի Հանրապետություն" տերմինը նշանակում է Չեխիայի Հանրապետության տարածքը, որի նկատմամբ Չեխիայի Հանրապետությունն իրականացնում է իր ինքնիշխան իրավունքները՝ Չեխիայի օրենսդրության եւ միջազգային իրավունքի համաձայն։

դ) "անձ" տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն եւ անձանց ցանկացած այլ միավորում,

ե) "ընկերություն" տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ։

զ) "ձեռնարկություն" տերմինը կիրառվում է ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ։

է) "Պայմանավորվող պետության ձեռնարկություն" եւ "Մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն" տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեգիստրատոր կողմից դեկավարվող ձեռնարկություն եւ մյուս Պայմանավորվող պետության ռեգիստրատոր կողմից դեկավարվող ձեռնարկություն։

ը) "միջազգային փոխադրում" տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետության ռեգիստրատոր կողմից շահագործվող նավով, օդանավով, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջեւ։

թ) "իրավասու մարմին" տերմինը նշանակում է.

ի) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարար եւ Կառավարության առընթեր հարկային պետական ծառայության պետ կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներ։

ii) Չեխիայի Հանրապետության դեպքում՝ ֆինանսների նախարար կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչ։

ժ) "քաղաքացի" տերմինը նշանակում է.

ի) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ։

ii) Պայմանավորվող պետության գործող օրենքների հիման վրա իր՝ որպես այդպիսին, կարգավիճակն ստացած ցանկացած իրավաբանական անձ, գործընկերություն կամ ասոցիացիա։

ժա) "ձեռնարկատիրական գործունեություն" տերմինը ներառում է նաեւ մասնագիտական ծառայությունների եւ անկախ բնույթի այլ գործունեության իրականացումը։

2. Ինչ վերաբերում է Պայմանավորվող պետության կողմից սույն Համաձայնագրի ցանկացած պահի կիրառմանը, ապա դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստն այլ բան չի պահանջում, ուսի այն նշանակությունը, որև այն ունի այդ պահին այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի առնչությամբ, որոնց վրա տարածվում է Համաձայնագրով. ընդ որում՝ այդ Պետությունում գործող հարկային օրենքներով սահմանված յուրաքանչյուր նշանակություն գերակայում է այդ Պետության այլ օրենքներով այդ տերմինին տրվող նշանակության նկատմամբ։

Հոդված 4

ՈԵԶԻ ԵՍՏԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով "Պայմանավորվող պետության ռեգիստր"

տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենքների համաձայն, ենթակա է հարկման այդ Պետությունում իր մշտական բնակության, ռեզիդենտության, ստեղծման վայրի, փաստացի կառավարման վայրի կամ ցանկացած այլ համանման չափանիշի հիման վրա, եւ ներառում է նաեւ այդ Պետությունը եւ նրա ցանկացած քաղաքական ստորաբաժանումը կամ իշխանության տեղական մարմինը: Սակայն այդ տերմինը չի ներառում որեւէ անձի, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացված եկամտից կամ այնտեղ գտնվող գույքից:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպով.

ա) նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի իր մշտական կացարանը. իսկ եթե նա երկու Պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ անձնական եւ տնտեսական կապերը (կենսական շահերի կենտրոն) առավել սերտ են.

բ) Եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ գտնվում է նրա կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից ոչ մեկում իր տրամադրության տակ չունի մշտական կացարան, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ սովորաբար բնակվում է.

գ) Եթե նա սովորաբար երկու Պետություններում էլ բնակվում է, կամ եթե նա չի բնակվում դրանցից եւ ոչ մեկում, ապա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է.

դ) Եթե նա հանդիսանում է երկու Պետությունների քաղաքացի կամ դրանցից եւ ոչ մեկի քաղաքացի չի հանդիսանում, Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, երբ 1-ին կետի դրույթների հիման վրա ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն Պետության ռեզիդենտ, որի քաղաքացին է:

### Հոդված 5

#### ՄԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Համաձայնագրի նպատակներով "Մշտական հաստատություն" տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. "Մշտական հաստատություն" տերմինը մասնավորապես ներառում է.

ա) կառավարման վայրը.

բ) մասնաճյուղը.

գ) գրասենյակը.

դ) գործարանը.

ե) արհեստանոցը.

զ) առեւտրի կետը եւ

ե) հանքահորը, նավթի կամ գազի հորատանցքը, քարհանքը կամ բնական պաշարների հետազոտման կամ արդյունահանման ցանկացած այլ վայրը:

3. "Մշտական հաստատություն" տերմինը ներառում է նաեւ.

ա) շինարարական հրապարակը, կառուցման, հավաքման կամ տեղակայման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական աշխատանքները, բայց միայն այն դեպքում երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ աշխատանքների տեսողությունը գերազանցում է վեց ամիսը.

բ) ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ խորհրդատվական կամ կառավարչական ծառայությունները) Պայմանավորվող պետության ձեռնարկության կամ այդ նպատակի համար ձեռնարկության վարձու կամ այլ աշխատողների միջոցով, բայց միայն այն դեպքում, երբ այդ բնույթի գործունեությունը մյուս Պայմանավորվող պետության տարածքում ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում ընդհանուր առմամբ գերազանցում է վեցամսյա ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ "Մշտական հաստատություն" տերմինը չի ներառում.  
ա) շինուագումների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.  
բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով.  
գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը այլ ձեռնարկության կողմից բացառապես մշակման նպատակով.

դ) ձեռնարկության համար գործունեության կայուն վայրի պահպանումը բացառապես ապրանքների կամ արտադրանքի գևման կամ տեղեկությունների հավաքման նպատակով.

Ե) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որեւէ այլ գործունեություն հրականացնելու նպատակով.

զ) գործունեության մշտական վայրի պահպանումը բացառապես "ա"- "Ե" ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ամրողական գործունեությունն ունի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Չնայած 1-ին եւ 2-րդ կետերի դրույթներին՝ այն դեպքում, եթե անձը, որը չի հանդիսանում անկախ կարգավիճակով գործակալ (որին վերաբերում է 6-րդ կետը), գործում է Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է մշտական հաստատություն ունեցող առաջինը նշված Պայմանավորվող պետությունում՝ այդ անձի կողմից տվյալ ձեռնարկության համար հրականացվող ցանկացած գործունեության մասով, եթե այդպիսի անձը.

ա) ունի եւ սովորաբար օգտագործում է այդ Պետությունում ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, եթե այդպիսի անձի գործունեությունը սահմանափակվում է 4-րդ կետով, որը եթե անգամ իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով, այդ կետի դրույթների համաձայն՝ այդ գործունեության կայուն վայրը չի վերածում մշտական հաստատության, կամ

բ) չունի այդպիսի իրավասություն, բայց սովորաբար առաջինը նշված Պետությունում պահում է ապրանքների կամ արտադրանքի պահեստ, որտեղից պարբերաբար ապրանքներ կամ արտադրանք է առաջում ձեռնարկության անունից:

6. Ձեռնարկությունը չի համարվում մշտական հաստատություն ունեցող Պայմանավորվող պետությունում միայն այն պատճառով, որ իր ձեռնարկատիրական գործունեությունն այդ պետությունում իրականացնում է բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեգիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ ընկերությանը կամ վերահսկում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպով), ինքնին այդ ընկերություններից որեւէ մեկին չի դարձնում մյուսի մշտական հաստատությունը:

## Հոդված 6

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ ՍԱԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ

1. Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. "Անշարժ գույք" տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող պետության օրենքով, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Տերմինը ամեն

դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում եւ անտառային տնտեսությունում օգտագործվող անասուններն ու սարքավորումները, այն հրավունքները, որոնց նկատմամբ կիրավում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի օգտագործման հրավունքը (ուզուֆրուկտ) եւ օգտակար հանածոների հանքավայրերի եւ այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման հրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող փոփոխական կամ հաստատուն վճարումների հրավունքները: Ծովային, օդային, շերկաթուղային եւ ավտոմոբիլային փոխադրամիջոցները չեն համարվում անշարժ գույք:

3. 1-ին կետի դրույթները կիրավում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տակուց կամ ցանկացած այլ ձեւով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները կիրավում են նաեւ ձեռնարկության անշարժ գույքից ստացված շահույթի նկատմամբ:

### Հոդված 7

#### ՁԵՌԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԾԱՐՈՒՅԹԸ

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը չի հրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձեւով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այս չափով, որը վերագրելի է տվյալ մշտական հաստատությանը:

2. 3-րդ կետի դրույթներով, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այստեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանն է վերագրվում այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույնպիսի կամ համանման պայմաններում, նույնպիսի կամ համանման գործունեություն իրականացնող՝ միանգամայն ինքնուրույն եւ առանձին ձեռնարկություն եւ գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցնել մշտական հաստատության գործունեության նպատակներով կատարված ծախսերը, այդ թվում՝ կառավարչական եւ ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

Սակայն ոչ մի այդպիսի նվազեցում չպետք է թույլատրվի այն գումարների նկատմամբ, եթե այդպիսիք կան, որոնք վճարվել են (այլ կերպ, քան փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) մշտական հաստատության կողմից ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին՝ արտոնագրերից կամ այլ հրավունքներից օգտվելու համար, ռոյալթիի, հոնորարների կամ նման վճարումների տեսքով կամ մատուցած հատուկ ծառայությունների կամ կառավարման համար միջնորդավճարի միջոցով կամ (բացառությամբ բանկերի) մշտական հաստատությանը տրամադրած փոխառության համար տոկոսների միջոցով:

Նմանապես մշտական հաստատության շահույթները սահմանելիս ոչ մի գումար չի համարվի ընդունված պահանջված գումարների նկատմամբ (այլ կերպ, քան փաստացի կատարված ծախսերի փոխհատուցում) մշտական հաստատության կողմից ձեռնարկության գլխավոր գրասենյակին կամ նրա այլ գրասենյակներին՝ արտոնագրերից կամ այլ հրավունքներից օգտվելու համար, ռոյալթիի, հոնորարների կամ նման վճարումների միջոցով կամ մատուցած հատուկ ծառայությունների կամ կառավարման համար միջնորդավճարի միջոցով կամ (բացառությամբ բանկերի) մշտական հաստատությանը տրամադրած փոխառության համար տոկոսների տեսքով:

4. Եթե Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը

Վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության տարրեր ենթամասերի միջեւ ձեռնարկության ընդհանուր շահույթի համամասնական բաշխման հիման վրա, ապա 2-րդ կետում ոչինչ չի արգելում այդ Պայմանավորվող պետությանը որոշել հարկման ենթակա շահույթը բաշխման այդպիսի ընդունված եղանակով: Այնուամենայնիվ, բաշխման ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածի սկզբունքներին:

5. Մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չի հանդիսանում այդ մշտական հաստատությանը որեւէ շահույթ վերագրելու համար:

6. Նախորդ կետերի նպատակներով՝ մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի որոշվում է նույն եղանակով, քանի դեռ չկա այն փոխելու հիմնավոր եւ բավարար պատճառ:

7. Այն դեպքում, եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնք առանձին քննարկված են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

### Հոդված 8

#### ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՓՈԽԿՐՈՒՄՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից միջազգային փոխադրումներում ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները կիրառվում են նաեւ ընկերությունների միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ գործող միջազգային գործակալությունում մասնակցությունից ստացած շահույթի նկատմամբ:

### Հոդված 9

#### ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԶԵՂՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

##### Եթե՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միեւնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության եւ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

եւ յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջեւ նրանց առեւտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են այնպիսի պայմաններ, որոնք տարբերվում են երկու անկախ ձեռնարկությունների միջեւ գործող պայմաններից, ապա ցանկացած շահույթ, որը հաշվեգրված կլիներ նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով այդպես չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ եւ, համապատասխանաբար, հարկվել:

### Հոդված 10

#### ԾԱՇԱԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետության ռեգիդենտ ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաեւ այն Պայմանավորվող պետությունում, որի ռեգիդենտ է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե

շահաբաժինների շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ է, ապա այդ ձեւով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետության իրավասու մարմիններն այս սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

Սույն կետը չի ազդի ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. "Շահաբաժիններ" տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ պարտապահանց չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև այլ եկամուտ, որը ենթակա է հարկային կարգավորման այնպես, ինչպես բաժնետոմսերից եկամուտը՝ այն Պետության օրենքների համաձայն, որի ռեգիդենտն է բաշխումը կամ վճարումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների շահառու սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեգիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ բաժնետեր ընկերությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, անմիջականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող պետության ռեգիդենտ ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունում, այդ մյուս Պետությունը չի կարող հարկել ընկերության կողմից վճարված շահաբաժինները՝ բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեգիդենտին, կամ երբ բաժնետեր ընկերությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, անմիջականորեն կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության հետ, ինչպես նաև չի կարող ընկերության չբաշխված շահույթը հարկել ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, եթե նույնիսկ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

### Հոդված 11

#### ՏՈԿՈՍՆԵՐԸ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ Պետության օրենքների համաձայն. բայց եթե տոկոսների շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ է, ապա այդ ձեւով գանձված հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

3. Չնայած 2-րդ կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից փաստացի տնօրինվող տոկոսները.

ա) կազատվեն հարկումից այն Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, եթե դրանք վճարվում են՝

ի) մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը, նրա քաղաքական ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմնին, այդ մյուս Պետության կենտրոնական բանկին կամ մյուս Պետության կառավարության կողմից տնօրինվող կամ վերահսկվող ֆինանսական կազմակերպությանը.

ii) կապված մյուս Պայմանավորվող պետության կառավարության, այդ մյուս Պետության կենտրոնական բանկի կամ կառավարության կողմից տնօրինվող կամ վերահսկվող ֆինանսական կազմակերպության կողմից երաշխավորված կամ ապահովագրված

Վարկի կամ փոխառության հետ.

բ) հարկվում են այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են, տոկոսների համախառն գումարի 5 տոկոսը չգերազանցող դրույքաչափով, եթե տոկոսները վճարվում են՝ կապված բանկի կողմից հատկացված ցանկացած տեսակի փոխառության կամ վարկի հետ:

Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն հոդվածի 2-րդ Եւ 3-րդ կետերում նշված սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

4. "Տոկոսներ" տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից՝ անկախ հիպոտեկային ապահովումից եւ անկախ պարտապահնի՝ շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, եւ, մասնավորապես, եկամուտ պետական արժեթղթերից եւ եկամուտ պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի եւ փոխառության տոմսերի հետ կապված պարգեւավճարներն ու մրցանակները: Ժամկետանց վճարման համար գանձվող տույժերը սույն հոդվածի նպատակներով որպես տոկոսներ չեն դիտարկվում: "Տոկոսներ" տերմինը չի ներառում եկամուտ որեւէ տարր, որը, 10-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան, սահմանված է որպես շահաբաժին:

5. 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների շահառու սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ պարտապահանջը, որի կապակցությամբ վճարվում են տոկոսները, անմիջականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեգիդենտ է: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեգիդենտ լինելու կամ չլինելու հանգամանջից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, եւ այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

7. Եթե վճարողի եւ շահառու սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կիամաձայնեցվեր վճարողի եւ շահառու սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը նշված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

## Հոդված 12

### ՈՒՅՑԱԼԹԻՆ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող եւ մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարված ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաեւ այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համապատասխան բայց եթե ռոյալթի շահառու սեփականատերը մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ է, ապա այդ ձեւով գանձվող հարկը չպետք է գերազանցի.

ա) ռոյալթի համախառն գումարի 5 տոկոսը՝ 3-րդ կետի "ա" ենթակետում նշված տեսակի դեպքում.

բ) ռոյալթի համախառն գումարի 10 տոկոսը՝ 3-րդ կետի "բ" ենթակետում նշված

տեսակի դեպքում:

Պայմանավորվող պետության իրավասու մարմիններն այս սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. "Ռոյալթի" տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝

փոխադարձ ստուգած ստացած տեսակի վճարում.

ա) ցանկացած գրական, գեղարվեստական կամ գիտական աշխատանքի, ներառյալ կինոժամանակակիցների եւ հեռուստառադիրադրումների հեռարձակման համար օգտագործվող ժապավենների կամ ձայների վճարում:

բ) ցանկացած արտոնագրի, պարանքային նշանի, ձեւավորման կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձեւի կամ գործնթացի եւ համակարգչային ծրագրի կամ ցանկացած արդյունաբերական, առեւտրային կամ գիտական սարքավորման օգտագործման կամ օգտագործման իրավունքի կամ արդյունաբերական, առեւտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկությունների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար:

4. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթի շահառու սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այստեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, եւ իրավունքը կամ գույքը, որի դիմաց վճարվում է ռոյալթին, անմիջականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության հետ: Այդ դեպքերում կիրառվում են 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետության ռեզիդենտ է: Սակայն այն դեպքում, եթե ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն, որի կապակցությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, եւ այդպիսի ռոյալթի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը:

6. Եթե վճարողի եւ շահառու սեփականատիրոջ կամ նրանց երկուսի եւ որեւէ այլ անձի միջեւ հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի եւ շահառու սեփականատիրոջ միջեւ նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը և շված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենքներին համապատասխան՝ պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 13

### ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼՎԱԾԸ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ 6-րդ հոդվածում նշված եւ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելանը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) օտարումից ստացված արժեքի հավելանը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների կամ այդպիսի ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելանը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից ընկերության բաժնետոմսերի կամ այլ իրավունքների օտարումից ստացված արժեքի հավելածը, որի արժեքի ավելի քան 50 տոկոսն առաջանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

5. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից առաջացած արժեքի հավելածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեգիդենտ է հանդիսանում օտարող անձը:

### Հոդված 14

#### ՎԱՐՉՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏԸ

1. 15-րդ, 17-րդ եւ 18-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ՝

Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից վարձատրովի աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձերը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե միայն այդպիսի վարձատրովի աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է այդ ձեւով, ապա դրա դիմաց ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձատրովի աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը նշված Պետությունում, եթե առկա են հետեւյալ բոլոր պայմանները.

ա) ստացողը հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամկետի կամ ժամկետների ընթացքում, եւ

բ) վարձատրության հետ կապված ծախսերը կատարվում են մյուս Պետության ռեգիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, եւ

գ) վարձատրության հետ կապված ծախսերը չի կատարում գործատուի՝ մյուս Պետությունում ունեցած մշտական հաստատությունը:

3. 2-րդ կետի "ա" ենթակետում նշված ժամանակահատվածների հաշվարկի ընթացքում ներառվում են հետեւյալ օրերը.

ա) ֆիզիկական ներկայության բոլոր օրերը՝ ներառյալ ժամանումների եւ մեվսումների օրերը, եւ

բ) գործունեության իրականացման Պետությունից դուրս անցկացրած օրերը, ինչպիսիք են շաբաթ եւ կիրակի օրերը, ազգային տոները, արձակուրդները եւ գործնական ճամփորդությունները, որոնք ուղղակիորեն կապված են այդ Պետությունում ստացողի վարձու աշխատանքի հետ, որից հետո վերսկսվել է գործունեությունը այդ Պետության տարածքում:

4. 2-րդ կետի "բ" ենթակետում նշված "գործատու" տերմինը նշանակում է՝ անձ, որը ունի աշխատանք տալու իրավունք եւ պատասխանատվություն ու ռիսկ է կրում՝ կապված այդ աշխատանքի իրականացման հետ:

5. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցում իրականացվող վարձատրովի աշխատանքի դիմաց Պայմանավորվող պետության ռեգիդենտի ստացած վարձատրությունը կարող է հարկվել այդ Պետությունում:

### Հոդված 15

#### ՏՆՈՐԵՆՆԵՐԻ ՊԱՏՎԱՎՃԱՐՆԵՐԸ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ ընկերության տնօրենների խորհրդի կամ ցանկացած այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի ստացած տնօրենների պատվավճարները եւ համանման այլ վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

## Հոդված 16

### ԴԵՐԱՎԱՆԱՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

1. Չնայած 7-րդ եւ 14-րդ հոդվածների դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում որպես թատրոնի, կինոյի դերասան, ռադիոյի կամ հեռուստատեսության հաղորդավար կամ երաժշտ, կամ որպես մարզիկ իր գործունեությունից ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե դերասանի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ դերասանին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ եւ 14-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է դերասանի կամ մարզիկի գործունեությունը:

## Հոդված 17

### ԿԵՆՍԱԹՈՇՎԱԿՆԵՐԸ

18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանմամբ՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտին նախկին վարձատրովի աշխատանքի դիմաց վճարված կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

## Հոդված 18

### ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանության մարմնին մատուցած ծառայությունների դիմաց անձին վճարված աշխատավարձերը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Այսուամենայնիվ, այդպիսի աշխատավարձերը եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ Պետությունում, եւ անձն այդ Պետության ռեգիդենտ է, որը.

ի) այդ մյուս Պետության քաղաքացի է, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեգիդենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից անձին՝ այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարված կենսաթոշակները կամ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Այսուամենայնիվ, այդպիսի կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե անձն այդ Պետության ռեգիդենտն է եւ քաղաքացին:

3. 14-րդ, 15-րդ, 16-րդ եւ 17-րդ հոդվածների դրույթները կիրառվում են այն ծառայությունների մատուցման դիմաց ստացված աշխատավարձերի, կենսաթոշակների եւ համանման այլ վարձատրությունների նկատմամբ, որոնք կապված են Պայմանավորվող պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանման կամ տեղական իշխանության կողմից իրականացված ծեռնարկատիրական գործունեության հետ:

## Հոդված 19

## ՈՒՍՎԱՆՈՂՆԵՐԸ

1. Ուսանողը կամ վերապատրաստվողը, որը հանդիսանում է կամ անմիջապես միևնույն Պայմանագրովող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանագրովող պետության ռեզիդենտ, եւ որը գտնվում է առաջինը նշված Պետությունում բացառապես իր ուսման կամ վերապատրաստման նպատակով, այդ Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ վերապատրաստվելու համար ստացած վճարումներից, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Ինչ վերաբերում է 1-ին կետում չընդգրկված գրանտներին, կրթաթոշակներին, վարձատրովի աշխատանքի դիմաց վճարումներին, 1-ին կետում նշված ուսանողը կամ վերապատրաստվողն այդպիսի ուսման կամ վերապատրաստման ընթացքում հարկերի առնչությամբ միեւնույն արտոնությունների, ազատումների կամ նվազեցումների իրավունք է ստանում, ինչպիսիք կիրառվում են այն Պայմանագրովող պետության ռեզիդենտի նկատմամբ, ուր նա ժամանում է:

Հոդված 20

## ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏԸ

Պայմանագրովող պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չնշված եկամտի տարրերը, անկախ դրանց առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում: Սակայն եթե այդպիսի եկամուտն ստացվում է մյուս Պայմանագրովող պետության աղբյուրներից, այդ եկամուտը կարող է հարկվել նաև այդ մյուս Պետությունում:

Հոդված 21

## ԳՈՒՅՔԸ

1. Պայմանագրովող պետության ռեզիդենտի սեփականություն համարվող եւ մյուս Պայմանագրովող պետությունում գտնվող անշարժ գույքը, հիշատակված 6-րդ հոդվածում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Պայմանագրովող պետության ծեռնարկության՝ մյուս Պայմանագրովող պետությունում ունեցած մշտական հաստատության ծեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանագրովող պետության ռեզիդենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող օդային, ծովային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների եւ այդպիսի ծովային, օդային, երկաթուղային կամ ավտոմոբիլային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

4. Պայմանագրովող պետության ռեզիդենտի գույքի մյուս բոլոր տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 22

## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Այն դեպքում, եթե Պայմանագրովող պետության ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ գույք է տևօրինում, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել մյուս Պայմանագրովող պետությունում, ապա առաջինը հիշատակված Պետությունը թույլ է տալիս.

ա) այդ ռեզիդենտի եկամտահարկից նվազեցում այդ մյուս Պետությունում վճարված եկամտահարկին հավասար գումարի չափով.

բ) այդ ռեգիդենտի գույքահարկի նվազեցում այդ մյուս Պետությունում վճարված գույքահարկին հավասար գումարի չափով:

Այսուամենայնիվ, այդպիսի նվազեցումը ցանկացած դեպքում չպետք է գերազանցի մինչեւ նվազեցման տրամադրումը հաշվարկված Եկամտահարկի կամ գույքահարկի այն մասը, որը, ըստ անհրաժեշտության, վերագրելի է այն Եկամտին կամ գույքին, որը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե, սույն Համաձայնագրի ցանկացած դրույթին համապատասխան, Պայմանավորվող պետության ռեգիդենտի ստացած Եկամուտը կամ տնօրինած գույքը այդ Պետությունում ազատված է հարկումից, այդ Պետությունը, այսուամենայնիվ, այդպիսի ռեգիդենտի Եկամտի կամ գույքի մնացած մասի Նկատմամբ հարկի գումարը հաշվարկելիս կարող է հաշվի առնել հարկումից ազատված Եկամուտը կամ գույքը:

### Հոդված 23

#### ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետության քաղաքացիները մյուս Պայմանավորվող պետությունում չեն Ենթարկվում այլ կամ ավելի ծանր որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության կատարման, մասնավորապես՝ կապված ռեգիդենտության հետ, քան այն հարկումը ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումն է, որոնց միեւնույն հանգամանքների դեպքում Ենթարկվում են կամ կարող են Ենթարկվել այդ մյուս Պետության քաղաքացիները: Չնայած 1-ին հոդվածի դրույթներին՝ սույն դրույթը կիրառվում է նաեւ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեգիդենտ չհանդիսացող անձանց Նկատմամբ:

2. Քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնք Պայմանավորվող պետության ռեգիդենտ են, Պայմանավորվող պետություններից եւ ոչ մեկում չպետք է Ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը եւ դրա հետ կապված պարտավորության կատարումն է, որոնց այդ Պետության քաղաքացիները միեւնույն հանգամանքներում, մասնավորապես՝ ռեգիդենտության դեպքում, Ենթարկվում են կամ կարող են Ենթարկվել:

3. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ քարենապատ, քան համանման գործունեություն իրականացնող այդ մյուս Պետության ձեռնարկությունների հարկումն է: Սույն դրույթը չպետք է մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտներին քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա հարկման նպատակներով տրամադրել այնպիսի անձնական արտոնություններ, նվազեցներ եւ գեղեցր, ինչպիսիք Պայմանավորվող պետությունը շնորհում է իր սեփական ռեգիդենտներին:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարված տոկոսները, ռոյալթին եւ այլ վճարումները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով Ենթակա են նվազեցման նույն պայմաններով այսպես, ինչպես կնվազեցվեին, եթե վճարված լինեին առաջինը նշված Պետության ռեգիդենտին: Նմանապես, Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտավորություն մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտի Նկատմամբ այդպիսի ձեռնարկության՝ հարկման Ենթակա գույքի որոշման նպատակով Ենթակա է նվազեցման նույն պայմաններով այսպես, ինչպես կնվազեցվեր, եթե դա կատարվեր առաջինը նշված Պետության ռեգիդենտի Նկատմամբ:

5. Պայմանավորվող պետության այն ձեռնարկությունները, որոնց գույքը ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեգիդենտների կամ ուղղակի կամ անուղղակի վերահսկում է այդ մյուս Պետության մեկ կամ մի քանի ռեգիդենտների կողմից, չպետք է առաջինը նշված Պետությունում Ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված

պարտավորությունների կատարման, քան առաջինը նշված Պետության՝ նման այլ ձեռնարկությունները:

6. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին սույն հոդվածի դրույթները կկիրառվեն ցանկացած տեսակի եւ բնույթի հարկերի նկատմամբ:

### Հոդված 24

#### ՓՈԽԱՎԱՅՐԱՅԻՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑՎԱԿԱՐԳԸ

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներպետական իրավունքով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեգիստրացիան է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է սույն Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի քաղաքացին է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից երեք տարվա ընթացքում:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, եւ եթե ինքն ի վիճակի չէ գտնելու գոհացուցիչ լուծում, ապա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Զեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է կիրառվի՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներպետական իրավունքում առկա որեւէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները Համաձայնագրի մեևնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած դժվարություն կամ տարածայնություն կձգտեն լուծել փոխհամաձայնությամբ: Համաձայնագրով չնախատեսված դեպքերում նրանք կարող են նաեւ խորհրդակցել միմյանց հետ կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

### Հոդված 25

#### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՎԱԿՈՒՄԸ

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են այսպիսի տեղեկություններ, որոնք ենթադրաբար անհրաժեշտ են սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ Պայմանավորվող պետությունների կամ քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության անունից կիրառվող ցանկացած տեսակի եւ բնույթի հարկերին վերաբերող ներպետական օրենքների իրականացման կամ կատարման համար այնքանով, որքանով հարկումը չի հակասում Համաձայնագրին: Տեղեկության փոխանակումը չի սահմանափակվում 1-ին եւ 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության՝ 1-ին կետի համաձայն ստացած ցանկացած տեղեկություն նմանապես համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենքների համաձայն ստացված տեղեկությունը, եւ կիաղորդվի միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները եւ վարչական մարմինները), որոնք գբաղված են 1-ին կետում նշված հարկերը գնահատելով կամ հավաքելով, հարկադիր գանձմամբ կամ դատական հետապնդմամբ, դրանց հետ կապված բողոքարկումների ընսարկմամբ կամ վերոնշյալ գործառույթների վերահսկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են տեղեկությունները հրապարակել դուքսաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

3. 1-ին եւ 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող։  
ա) իրականացնել իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներին եւ վարչական գործելակերպին հակասող վարչական միջոցառումներ։  
բ) Ներկայացնել տեղեկություններ, որոնք հասանելի չեն իր կամ մյուս Պայմանավորվող պետության օրենքներով կամ սովորական վարչական գործելակերպի ընթացքում։  
գ) Ներկայացնել տեղեկություններ, որոնք բացահայտում են որեւէ արտադրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առեւտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ արտադրական գործնթաց, կամ՝ տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

4. Եթե տեղեկությունը Պայմանավորվող պետության կողմից պահանջվում է սույն հոդվածին համապատասխան, մյուս Պայմանավորվող պետությունն օգտագործում է տեղեկություններ հավաքելու իր միջոցները՝ պահանջվող տեղեկությունը ստանալու համար, եթե նույնիսկ այդ մյուս Պետության այդպիսի տեղեկություն չի պահանջվում հարկման իր նպատակների համար։ Նախորդ նախադասության մեջ նշված պարտավորությունը ենթակա է 3-րդ կետի սահմանափակումներին, բայց ոչ այն դեպքում, եթե այդպիսի սահմանափակումները մեկնաբանվում են որպես Պայմանավորվող պետության կողմից տեղեկության տրամադրումը մերժելու իրավունք միայն այն պատճառով, որ նա չունի ներքին հետաքրքրություն այդպիսի տեղեկության հարցում։

5. 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետության կողմից տեղեկության տրամադրումը մերժելու իրավունք միայն այն պատճառով, որ տեղեկությունը տնօրինվում է բանկի, այլ ֆինանսական հաստատության, հավատարմագրված կամ գործակալությունում աշխատող կամ վստահված անձի կողմից կամ վերաբերում է անձի սեփականության շահերին։

### Նոդված 26

#### ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՎԱՑՈՒՅՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՂԱՏՈՍԱԿԱՆ ՐԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՐՏԵՐԸ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հաստատությունների անդամներին միջազգային իրավունքի ընդիանուր նորմերով կամ հատուկ համաձայնագրերի դրույթներով տրամադրված հարկային արտոնությունների վրա։

### Նոդված 27

#### ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՐՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

1. Չնայած սույն Համաձայնագրի ցանկացած այլ հոդվածի դրույթներին՝ սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունները չեն տրամադրվի Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի ընկերություններին, եթե այդպիսի ընկերությունների նպատակը սույն Համաձայնագրով արտոնությունների ստացումն է, որոնք այլ կերպ հասանելի չեն։

2. Սույն Համաձայնագրի դրույթները ոչ մի դեպքում Պայմանավորվող պետությանը չեն արգելում իր ներպետական օրենքների դրույթները կիրառել հարկումից խուսափելը կանխելու նպատակով՝ պայմանով, որ եկամտի հարկումն այդ Պետությունում չի հակասում սույն Համաձայնագրին։

3. Պայմանավորվող պետության իրավասու մարմինը մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմինի հետ խորհրդակցելուց հետո կառող է մերժել սույն Համաձայնագրով արտոնությունների տրամադրումը ցանկացած անձ կամ ցանկացած գործարքի առնչությամբ, եթե նրա կարծիքով այդ արտոնությունների տրամադրումն առաջացնում է Համաձայնագրի չարաշահում։

ՈՒԺԻ ՄԵԶ ՄՏՆԵԼԸ

Պայմանավորվող պետությունները դիվանագիտական ուղիներով միմյանց գրավոր ծանուցում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իրենց ներպետական օրենքներով պահանջվող ընթացակարգերի ավարտի մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այս ծանուցումներից վերջինի ստացման օրվանից, եւ նրա դրույթները երկու Պայմանավորվող պետություններում գործում են.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո վճարված կամ հաշվեգրված եկամտի նկատմամբ.

բ) այլ եկամտահարկերի կամ գույքահարկերի դեպքում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող ցանկացած հարկային տարում եկամտի կամ գույքի նկատմամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում մինչեւ Պայմանավորվող պետության կողմից դադարեցվելը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագրի գործողությունը դրա ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առևլվածն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին գրավոր ծանուցելու միջոցով: Այդ դեպքում երկու Պայմանավորվող պետություններում Համաձայնագիրը դադարում է գործելուց.

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի դեպքում՝ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո վճարված կամ հաշվեգրված եկամուտների նկատմամբ.

բ) այլ գույքահարկերի եւ եկամտահարկերի դեպքում՝ ծանուցումը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող ցանկացած հարկային տարում եկամտի կամ գույքի նկատմամբ:

Ի ՎԿՎՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ ՆԵՐՁՈՍՄՈՐԱԳՐՅԱԼՆԵՐԸ, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երեւան քաղաքում 2008 թվականի հուլիսի 6-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չեխերեն եւ անգլերեն. բոլոր տեքստերն եւ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ առաջացած որեւէ տարածայնության դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2009 թ. հուլիսի 15-ին: